

Այս շատ յատկանշական պարագայէն զատ, Յովհաննէս Արքեպ. կուտայ խիստ շահեկան տեղեկութիւններ երկիրի մը մասին, որ մինչև այդ թուականները անծանօթ կը մնար օտարականներու և որուն հազիւ թէ ծանօթանալ սկսած էին եւրոպացիները, հայ արքեպիսկոպոսին ուղեւորութենէն մօտ դար մը առաջ:

Այս ճամբորդութիւնը կատարուած՝ շատ խորհրդաւոր պայմաններու մէջ, ոչ միայն հետաքրքրական է իր հայթայթած տեղեկութիւններով եւ աշխարհագրական կարեւոր գիւտի մը յայտնութեամբ, այլ նաեւ իր չքացատրուած, նոյնիսկ շատ զգուշութեամբ պահուած շարժառիթով: Կը թուի, թէ հայ արքեպիսկոպոսին վստահուած էր շատ կարեւոր քաղաքական առաքելութիւն մը, որով շահագրգռուած էին թերեւս հայերն ալ, որոնք անոր յաջողութենէն կը սպասէին իրենց ազատագրումը՝ թրքական կեղեքումներէն և հարստահարութիւններէն:

Ահա՛ այն զանազան պատճառները, որոնք մղեցին զիս հրատարակութեան տալու այս ուշագրաւ գործը, քաղելով զայն ուղեւոր Արքեպիսկոպոսին ձեռագիրէն, թէև ոչ մէկ յիշատակարան կամ քացատրութիւն կայ այս պարագան հաստատող:

Կը պահենք անփոփոխ հեղինակին լեզուն և ուղղագրութիւնը:

---